ՀՀ կառավարության մեկնաբանությունները

Տարածաշրջանային կամ Փոքրամասնությունների Լեզուների Եվրոպական Խարտիայի 16-րդ հոդվածի համաձայն Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեին փորձագետների կոմիտեի կողմից ներկակայցրած զեկույցի վերաբերյալ

Հիմնական մեկնաբանություններ

Հայաստանյան իշխանությունները մեծ կարևորություն են տալիս Փորձագետների կոմիտեի կարծիքին և դրանք շատ օգտական համարում Խարտիայի հետագա իրագործման ընթացքում: Ուշադրության կենտրոնում է գտնվում Խարտիայի իրագործումը, որն աջակցվում է Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայով երկրի ստանձնած պարտավորությունների բավարարման գործընթացով:

Միաժամանակ Կոմիտեի դիտարկած որոշ խնդիրներ գրանցվել են ինչպես Հայաստանի Հանրապետության էթնիկ կազմի առանձնահատկությունների, ոչ հայ էթնիկ համայնքների փոքր թվի, դրանց ցրված բնակության պատճառով, այլև որպես հետևանք այն բանի, որ ժողովրդավարական բարեփոխումների գործընթացը դեռ ընթացքի մեջ է:

Օրինակ՝ Տեղական իրնքնակառավարման մարմինների մասին օրենքի բարենորոգումների գործընթացը և դրանց բյուջեի ձևավորման խնդիրը խոչընդոտում է այնպիսի կարևոր հարցի լուծում, ինչպիսին է նախադպրոցական ուսուցումը: Մենք ցանկանում ենք նշել, որ այս խնդիրը ակտուալ է ոչ միայն փոքրամասնությունների, այլև ողջ Հայաստանի համար:

Սահմանադրական բարենորոգումների փաթեթը ընդունվել է 2005 թվականի Նոյեմբերի 27-ի հանրաքվեով: Սահմանադրական բարենորոգումները ուղղված էին նաև Հայաստանում ազգային փոքրամասնությունների խնդիրներին: Հետևաբար Փորձագետնորի կոմիտեի զեկույցում նշված որոշ հարցեր և խնդիրներ կպարզաբանվեն և կթարմացվեն հաջորդ ազգային զեկույցում:

Այնուամենայնիվ մենք տրամադրում ենք որոշ մեկնաբանություններ

Զեկույցի տարբեր հոդվածների Մեկնաբանություններ

1. Հոդվածներ 9 և 11-ի մեկնաբանություններ

Սույն աղյուսակը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության բնակչության բախշումը քաղաքներում և գյուղերում 2001թ. մարդահամարի տվյալներով

Աղյուսակ 1

	ԱԶԳՈՒԹՅՈՒՆԸ							
	Հայ	Ասորի	Եզդի	Հույն	Ռուս	Ուկրաի-նացի	Քուրդ	այլ
Ընդամենը	3145354	3409	40620	1176	14660	1633	1519	4640
Քաղաք	2041622	524	7413	853	10489	1386	315	3551
Գյուղ	1103732	2885	33207	323	4171	247	1204	1089

Զեկույցում նշված է, որ եզդիախոսները զրադաշտական են: Իրականում եզդիախոսները անվանում են իրենց /իրենց կրոնը/ արևապաշտություն, մինչդեռ զրադաշտականություն նշանակում է կրակապաշտություն, և եզդիները նեղանում են իրենց այսպես կոչելու դեպքում:

2. Մեկնաբանություն զեկույցի 8-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունների իրագործման վերաբերյալ /կրթություն/

Զեկույցի 25, 53, 54, 55, 61 և 62 հոդվածների վերաբերյալ հայտնում ենք, որ 2005 թվականի ընթացքում հրատարակվել են եզդիրերենի առաջին, երկրորդ և երրորդ դասարանների դասագրքերը և ասորերենի այբբենարանը: Ուսումնական նյութերի թարմացման աշխատանքները ընթացքի մեջ են:

Հայտնում ենք նաև, որ Բաց հասարակության ինստիտուտի աջակցությամբ հրատարակվել է նախադպրոցական և տարրական դպրոցի համար նախատեսված «Գրի և կարդա ասորերեն» ձեռնարկը:

UNICEF-ի աջակցությամբ մշակվել և մինչև 2006-ի սեպտեմբեր հրապարակվելու է ասորերենի տարրական դպրոցի դասագիրքը:

2006-ի հունվարին հրապարակվեց «Դասական ասորերեն» ձեռնարկը:

Քանի որ նոր ձեռնարկների հրապարակումը ավարտված է 2006-ին նախատեսվել են ամբողջական դասընթացներ ասորերենի և եզդիերենի ուսուցիչների համար:

Անհրաժեշտ է պարզաբանել, որ «օպտիմալացման ծրագրում» չներգրավված 400 դպրոցներից, ներկայացված 16 «պաշտպանված» դպրոցները դա այն դպրոցներն են, որտեղ ուսուցանվում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ /կից ներկայացված է այդ դպրոցների ցանկը/:

Աղյուսակ 2
Աշակերտների թվից անկախ ֆինանսավորվող՝ ազգային փոքրամասնություններով բնակեցված բնակավայրերի դպրոցների ցանկը

	Բնակավայրի անունը	Մարզը	ազգությունը
1	Թըլլըկի դպրոց	Արագածոտնի մարզ	եզդիներ
2	Շամիրամի դպրոց	Արագածոտնի մարզ	եզդիներ
3	Ալագյազի դպրոց	Արագածոտնի մարզ	քրդեր և եզդիներ
4	Ռյա Թազայի դպրոց	Արագածոտնի մարզ	քրդեր և եզդիներ
5	Դերեկի դպրոց	Արագածոտնի մարզ	եզդիներ
6	Սիփանի դպրոց	Արագածոտնի մարզ	եզդիներ
7	Սանգյառի դպրոց	Արագածոտնի մարզ	եզդիներ
8	Ամրե Թազայի դպրոց	Արագածոտնի մարզ	եզդիներ
9	Շենկանիի դպրոց	Արագածոտնի մարզ	եզդիներ
10	Ձամշլուի դպրոց	Արագածոտնի մարզ	եզդիներ
11	Գետափի դպրոց	Արագածոտնի	հայեր և եզդիներ

		մարզ	
12	Օրթաճյաի դպրոց	Արագածոտնի մարզ	եզդիներ
13	Գյալթոյի դպրոց	Արագածոտնի մարզ	եզդիներ
14	Բայսզի դպրոց	Արագածոտնի մարզ	եզդիներ
15	Բառոժի դպրոց	Արագածոտնի մարզ	եզդիներ
16	Ֆերիկի դպրոց	Արմավիրի մարզ	եզդիներ

Ինչ վերաբերում է փորձագիտական կոմիտեի անմիջական այցելության ժամանակ որոշ փոքրամասնությունների կողմից հայտնած այն կարծիքին, թե ցանկը չի ներառել բոլոր այն դպրոցները, որտեղ դասավանդվում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ և որ ասորերենի դասավանդումը հատկապես կբարդանա եթե օպտիմալացման ծրագիրը, ինչպես նախատեսվում է, շարունակվի, ապա պետք է ասել, որ խնդիրը ներկայացրել են այն ասորական գյուղերի դպրոցները, որոնք խնդիր են դնում դպրոցական կրթության լեզուն ասորիների համար պահել ռուսերենը:

Հայաստանի պարտավորությունները տարածվում են ասորիների հանդեպ ոչ թե ռուսերեն լեզուն որպես կրթության լեզու պաշտպանելու, այլև ասորերեն լեզուն՝ որպես մայրենի լեզու, և հայերենը ասորիներին սովորեցնելու՝ որպես պետական լեզու: Ռուսերենով կրթություն ստացող ասորիները երբեմն բարդություններ են ունենում ինչպես ասորերեն լեզուն բավարար տիրապետելու, այնպես էլ երկրի պետական լեզուն՝ հայերենը: Եթե ասորիները ընտրեին հայերեն և ասորերեն լեզուներով կրթությունը, ապա նրանց դպրոների պաշտպանվածության հարցը մեխանիկորեն կլուծվեր երկրի առկա կրթական քաղաքականության ընթացքում:

Նախադպրոցական կրթական հաստատությունների հիմնման և աջակցության պատասխանատուները տեղական ինքնակառավարման մարմիններն են: Նախադպրոցական կրթական հաստատությունները կարող են ստեղծվել և գործել տեղական բյուջեի միջոցներով ր հաշվետու լինեն տեղական համայնքին: Անհրաժեշտության դեպքում նրանք կարող են դիմել Կրթության

նախարարություն կամ տարածքային վարչական կենտրոնների /մարզպետարանների/ կրթական բաժիններ՝ ստանալու մեթոդական աջակցություն:

Ամեն տարի Կրթության և գիտության նախարարությունը հաստատում է ազգային փոքրամասնությունների համար նախատեսված կրթական պլանը, ըստ որի որոշվում է փոքրամասնությունների լեզուների և պատմության ուսուցման համար նախատեսված ժամաքանակը:

Ինչ վերաբերում է Փորձագետների կոմիտեի այն մտահոգությանը, թե բարձր է դպրոց չհաճախող աշակերտների տոկոսը, ուսուցիչները փոքրաթիվ են և դպրոցներ անկանոն են հաճախում, ապա ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության նախաձեռնությամբ 2004 թ. իրականացվել է մի հետազոտություն, որում մասնակիորեն վերլուծված են նաև մանկավարժական կադրերի պատասի և դպրոցական հաճախումների խնդիրը : Այժմ ընթացքի մեջ է միջոցառումների ծրագրի պատրաստումը :

Փորձագետների կոմիտեի խնդրանքը այն մասին, որպեսզի լրացուցիչ տեղեկություններ տրամադրեն մասնագիտական կրթության ոլորտում եզդիրենի և ասորերենի օգտագործման վրաբերյալ հայտնում ենք, որ նույնիսկ նախադպրոցական և դպրոցական կրթության մակարդակում ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը զգալի ջանքեր է թափում համոզելու, որ եզդի ծնողներն իրենց երեխաներին իրենց մայրենի լեզվի ուսուցման դասերի ուղարկեն : Այս նախաձեռնությունը խոչընդոտների է հանդիպում այն պատճառով, որ եզդի ծնողները չեն տեսնում մայրենի լեզվով կրթության գործնական հեռանկարները : Իսկ ասորիների մասնագիտական կրթության ցանկությունը ռուսերեն լեզվով է, և մեր բոլոր փորձերը՝ համոզել նրանց հակառակում, կրում են անհաջողություն : Ասորիների մեծ մասն ուզում է մասնագիտական կրթություն ստանալ ռուսերեն կամ հայերեն լեզուներով :

ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության 2004թ. նախաձեռնած հետազոտությունը նպատակ ուներ բացահայտել ասորիների, եզդիների, քրդերի և ռուսների մի մասի /մալականների/ դպրոցական կրթության պրոբլեմները և փորձել լուծել դրանք : Հետազոտությունն ի հայտ է բերել մի շարք լուծելի հարցեր և այժմ

մշակվում են այն ծրագրերը, որոնք պետությունը պետք է իրականցնի այդ ոլորտում :

3. Մեկնաբանություն զեկույցի 9-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունների իրագործման վերաբերյալ /Դատական մարմիններ/ և 10-րդ /Վարչական մարմիններ և հասարակական ծառայություններ /

82-րդ կետու բարձրացված բողոքների առնչությամբ հայտնում ենք, որ դատական կամ պետական այլ կառույցներում ընթացող լսումներում արդյունավետ և գերադասելի է հայերենի՝ որպես պատական լեզվի, օգտագործումը : Եթե փոքրամասնության ներկայացուցիչը տիրապետում է հայերենին ավելի նպատակահարմար է լսման ընթացքում օգտագործել հայերենը, հաշվի առնելով այն պայմանը, որ թարգմանությունը կարող է ոչ բոլոր դեպքերում լինել լավ որակի, քանի որ մասնավորապես այդ լեզվին լավ տիրապետով թարգմանիչներ չկան :

Այն դեպքերում, երբ նա վատ է տիրապետում հայերենին, ապա փոքրամասնության լեզվի օգտագործումը համաձայն օրեքնի ընդունելի է : Փոքրամասնության ներկայացուցիչը կարող է հայտարարել, որ ցանկանում է խոսել իր /փոքրամասնության/ լեզվով, նույնիսկ եթե լավ է տիրապետում հայերենին : Այս դեպքում ոչ ոք չի կարող նրան ստիպել խոսել պաշտոնական լեզվով : Նույնիսկ էթնիկ հայերը, ովքեր հայտարարում են, որ չեն տիրապետում կամ ոչ լիարժեք են տիրապետում հայերենին կարող են խոսել իրենց համար առավել հարմար լեզվով : Այս կապակցությամբ օրենքում սահմանափակում չկա :

Զեկույցի 98-րդ կետում նշված է, որ համաձայն Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 27-րդ հոդվածը սահմանում է, որ թարգմանությանը վճարվում է վարչական մարմնի կողմից: Այս ձևակորպումը ուղղման կարիք ունի, քանի որ օրենքի նշված հոդվածը տրամադրում է փոքրամասնության լեզվով փաստաթղթի թարգմանության ծառայությունը միայն այն դեպքերի համար երբ հայերեն թարգմանությունը պահանջվում է : Այլ դեպքերում թարգմանության ծախսերը հոգում է փաստաթղթեր ներկայացնող անձը : Իրականում նման խնդիր գոյություն չունի, քանի որ էթնիկ փաքրամասնությունները գիտեն պաշտոնական լեզուն և ներկայցնում են դիմումներ և համապատասխան փաստաթղթեր հայերեն լեզվով :

Վերը նշվածը վերաբերում է նաև 105 կետի ձևակերպմանը :

4. Մեկնաբանություն զեկույցի 11-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունների իրագործման վերաբերյալ / Լրատվամիջոցներ /

Հանրային ռադիոյով հեռարձակվում են քրդերեն, եզդիերեն 30 րոպեանոց ամենօրյա ռադիոհաղորդումներ :

«Մեր տունը Հայաստանն է» և «Հայաստան» անվանումներով ռուսերեն հաղորդումները հեռարձակվում են 30 րոպե:

«Մեր տունը Հայաստանն է» հաղորդումը հեռարձակվում է ամեն երկուշաբթի և պատմում է Հայաստանի ազգային փոքրամասնությունների հասարակական և մշակութային կյանքի, խնդիրների և բողոքների մասին : Հաղորդումը պատրաստվում է լեհական, հրեական, ուկրաինական և ռուսական համայնքների աջակցությամբ և ակտիվ մասնակցությամբ :

«Հայաստան» հաղորդումը հեռարձակվում է շաբաթական չորս անգամ և ներկայացնում է Հայստանի քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացումները, ինչպես նաև Հայաստանի տարբեր ազգային համայնքներում տեղի ունեցած իրադարձությունները :